

Արտատպված Է՝ Շուլում-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964: Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

ՇՈՒՆՄ-ԱԼԵՅԻՄԵՄ

(Քննադատական-կենսագրական ակնարկ)¹

Շուլում-Ալեյխեմ — դա հրեական ողջույն է, որ փոխանակում են հասարակ մարդիկ իրար հանդիպելիս: Հայերեն դա նշանակում է «խաղաղություն ձեզ»: Գրողն այդպիսի կեղծանուն ընտրեց այն պարզ պատճառով, որ գրում էր ժողովրդի մասին և ժողովրդի համար:

Դեռ բոլորովին երիտասարդ, Շուլում-Ալեյխեմը (իսկական անունը Շուլում-Ռաբինովիչ), ինչպես և նրա ավագ գրչակից Մենդելե Սֆորիմը, հետևելով ռուսական ռեալիստական գրականության տրադիցիաներին, գրում էր.

«Ժողովրդական գրողը, գեղարվեստագետը, բանաստեղծը, իսկական բանաստեղծը, իր ժամանակի, իր Էպոխայի համար հանդիսանում է մի հայելի, որի մեջ արտացոլվում են և շողշողում կյանքի ճառագայթները ճիշտ այնպես, ինչպես արևի ճառագայթները ջինջ առվակում: Այդ պատճառով ես պնդում եմ, որ չեն կարող լինել կենսականորեն կարևոր դեպքեր, համաժողովրդական ուրախություն կամ վիշտ, որոնք չշոշափվեն գրողի կողմից և ինչպես հարկն է չհուզեն նրան մինչև հոգու խորքը» («Շումերի դատը»):

Շուլում-Ալեյխեմի ստեղծագործություններում մշտապես զգացվում է կյանքի զարկերակը. նրա պատկերները վառ են և ցայտուն, դրանք աչքի են ընկնում ընդհանրացման իսկայական ուժով, որոնք երբեմն հասնում են սիմվոլի:

Շուլում-Ալեյխեմը չափազանց բարդ գրող է: Ռեալիստի սուր, ծաղրող աչք, նուրբ դիտող, որ ազահորեն ընկալում է տպավորություններ, արտառոց զգայուն՝ դեպի հասարակական երևույթները և մարդկանց անխոնջ ուսումնասիրող, նա այդ ամենի հետ նաև երազող է՝ անսանձ երևակայությամբ:

Նրա մի քանի ստեղծագործությունները, ինչպես «Մենախեմ Մենդը», «Յոթնասուկյոթ հազար», «Կախարդված դերձակը» գտնվում են ֆանտաստիկայի սահմանագծին, իսկ «Պատմվածքներ մանուկների համար», «Կաթնավաճառ Տեմլեն», «Երգ-երգոց» և «Տոնավաճառից» վիպակների շատ էջեր իսկական պոեզիա է, որ բխում է անապակ աղբյուրից:

Շուլում-Ալեյխեմի ստեղծագործությունը ընդգրկում է անցյալ դարի 70—80-ական թվականները, համարյա մինչև 1916 թվականի կեսը: Գրողը իր ցայտուն կերպարներով ցույց է տվել, թե Ռուսաստանում ապրող հրեա բնակչության կյանքում ինչպես է արտացոլվել միջնադարյան ֆեոդալական կարգերի քայքայումը: Նա ցույց է տվել միջնադարյան հրեական ավանի շփոթությունը հանդեպ նրա համար անհասկանալի հասարակական նոր երևույթները, որոնք անմիջապես նորանոր պատուհաններով իջնում են նրա գլխին:

Գրողի երկերում իր արտացոլումն է գտել հրեա ժողովրդական մասսաների ողբերգությունը, մասսաներ, որոնք կուտակված էին նախկին ռուսական միապետության նահանգներում, այսպես կոչված՝ «բնակության գծերում»: Նրանք զրկված էին խոշոր արդյունաբերական կենտրոններում և գյուղական վայրերում ապրելու իրավունքից: Հենց այդ ժողովրդական մասսաներին էլ, որոնք դատապարտված էին թշվառության, գրողը թույլ է տվել արտահայտվել:

Շուլում-Ալեյխեմի կերպարները իրենք են պատմում իրենց մասին: Դրանք պարզամիտ մարդիկ են, առանց խորամանկության, նրանց մոտ «ինչ որ գլխումն է, այն էլ լեզվին է»:

¹ Տրվում է կրճատումով:

Շուրմ-Ալեյխեմի կերպարները համառ պայքար են մղում գոյության համար և անդադրում երազում լավ կյանք: Եվ եթե նրանց կյանքը առայժմ վատ է, ապա նրանք միախորություն են գտնում սրախոսության ու կատակների մեջ: Ծիծաղը «ուրախ աղքատների» համար ծառայում է որպես ինքնապաշտպանություն:

Մենախոսության ժանրը այն ձևով, ինչպես որ ստեղծել է Շուրմ-Ալեյխեմը, այսինքն՝ անկեղծ պատմություն առաջին դեմքով, ամենից լավ է արտահայտել «ուրախ աղքատի» զգացմունքների զեղումը: Բայց հեղինակը այդ ձևից չի օգտվել երբեք ամեն ինչ ներելու նպատակով: Աշխարհին ներկայացնելով իր կերպարը այնպես, ինչպես նա կա, իր ողջ մերկությամբ, Շուրմ-Ալեյխեմը երբեք չի զարդարել այդ մերկությունը: Նա աչքերը չի փակել արատների առջև, արատներ, որոնք ծնվել են աղքատությունից, տգիտությունից, սոցիալական և ազգային ճնշումներից. Եվ ինչպես «Вестник Европы» գրաքննադատն է իր ժամանակին մեղադրել Սալտիկով-Շչեդրինին ժողովրդին «ծաղրի» ենթարկելու համար, հենց այդ տիպի քննադատներ Շուրմ-Ալեյխեմին էլ մեղադրել են նույն բանում, քանզի բթամիտ քաղցենիներին ու շովինիստներին, ինչպիսի ազգության էլ նրանք պատկանելիս լինեն, անհասկանալի է երգիծանքի և հումորի ազնվացնող և զտող դերը:

Հենց ժողովրդի հանդեպ ունեցած սերն է ոգեշնչել Շուրմ-Ալեյխեմին անողոր ծաղրի ենթարկելու սահմանափակ մտահորիզոնը, կյանքին հարմարվելու անկարողությունը, վտանգավոր պատրանքները: Նրա ծիծաղը չի ստորացրել մարդկանց. ամենածիծաղելի, անհեթեթ, հետամնաց մարդկանց մեջ էլ հեղինակը գտել է մարդու լուսավոր կերպարը:

Ծիծաղելի, անհեթեթ, բայց ոչ ստոր: Իսկ ստոր մարդիկ են Շուրմ-Ալեյխեմի աչքում ամեն տեսակի ճարպիկ ձեռնարկուները, վաշխառուները, նորաթուխ հարուստները: Նրանց նկարագրելու համար գրողը հավատարիմ է մնում իր նախասիրած ձևին, մենախոսությանը, բայց այստեղ մենախոսությունը մերկացնող դեր է կատարում:

Շուրմ-Ալեյխեմի պատմվածքներում մենք հանդիպում ենք ավանների և քաղաքների բազմաթիվ մտացածին, ինչպես և իսկական անունների՝ Հյոդենկա, Կոզոդոնկա, Կոդնյա, Դերաժնյա, Եգուպեց (Կիև) և այլն: Բայց նրա կերպարները, մեծ մասամբ կասրիլովցիներ են, այսինքն՝ բնակիչները Կասրիլովկայի, աշխարհագրական կետ, որ դուք երբեք և ոչ մի աշխարհագրական քարտեզի վրա չեք գտնի: Կասրիլովկան մտացածին անուն է: Դա այնպես է մտել գրողի գիտակցության մեջ, որ նա ինքնակենսագրական «Տոնավաճառից» վիպակում իր մասին գրում է. «Այս ինքնակենսագրական վիպակի հերոսը ապրել և դաստիարակվել է հենց և այն Կասրիլովկայում, որն արդեն մասամբ հայտնի է ընթերցողին»:

Կասրիլովկայի ֆոնի վրա են ծավալվում «Մենախոսությունների», «Ուրախ աղքատների», «Պատմվածքներ մանուկների համար» և մյուս ստեղծագործությունների գործողությունները: Դրանց կողքին Շուրմ-Ալեյխեմը ստեղծել է վիպակների և պատմվածքների մի ամբողջ շարք, որոնք արդեն անմիջականորեն նվիրված են Կասրիլովկային (1901—1916) և «որոնք ամբողջացնում են Կասրիլովկայի կերպարը («Մեծ իրարանցում փոքր մարդկանց մեջ», «Կասրիլովկայի այրվածները», «Նոր Կասրիլովկա», «Թափառող աստղեր» և այլն):

Եթե շուրմ-ալեյխեմյան «փոքր մարդիկ» հարում են ռուս գրականության այն գծին, որը ներկայացրել է Գոգոլը և փայլուն կերպով շարունակել Շուրմ-Ալեյխեմի ժամանակակից Ա. Պ. Զեխովը, ապա Կասրիլովկան «փոքր մարդկանց» քաղաքն է՝ ճիշտ այնպես, ինչպես Գլուպսկը և Ցունայեդովկան Մենդելի Մոյխեր-Սֆորիմի մոտ. գավառական քաղաքների նկարագրություն, որն այնքան տարածված էր տասնիններորդ դարի ռուսական գրականության մեջ և որն իր ավարտումը գտավ հանձինս է Մ. Գորկու «Օկուրով քաղաք»-ի:

Գավառական հետամնաց կյանքը, ուր առավել, քան խոշոր քաղաքներում, բուն էր դրել խաբեությունն ու տգիտությունը, ուր առավել ցայտուն էր հանդես գալիս իշխանությունն ունեցողների կամայականությունը, հումանիստ գրողներին առատ նյութ էր տալիս խարազանելու այն ժամանակի ցարական Ռուսաստանի կարգերը: Քաղաքի կերպարը, մարդկանց ոչ դիֆերենցված կուտակվածությամբ, արտացոլում էր այդ հասարակական կարգերում խեղդվող

մարդու կերպարը: Խարազանելով ուզոյումբուրչեններին և ծաղրելով գլուպովցիների հիմարությունը, Սայտիկով-Շչեդրինը պայքարում էր ոչ միայն ինքնակալության կամայականությունների դեմ՝ այլև մարդկային ազատ անհատականության համար:

«Բնակության գիծը» — դա հենց այդ նույն գավառն է: Դրանք ոչ մեծ գյուղեր ու ավաններ են, նախկին ցարական իմպերիայի «ծայրամասերում», որտեղ կենտրոնացված էր հրեա բնակչության համեմատաբար ապահովված մասը:

Կասրիլովյան պատմվածքներում հեղինակը պատկերում է մարդկային մի մեծ կոլեկտիվի ահավոր թշվառությունն ու անտերությունը: Տեղական վարչության գրագիրը մի ոչնչություն էր, որ իր ողջ կրթությունը քաղել է սևհարյուրակային թերթիկներից, մի ամբողջ ավանի բնակչությանը հասցնում է այնպիսի սարսափի, որ մի գեղեցիկ օր ավանը ոտքի է ելնում — տղամարդիկ, կանայք, ծերունիներ, երեխաներ — և սկսում է փախչել: Կասրիլովցիները որոշել էին իրենց համար ապաստան գտնել Կոզոդունկայում, բայց կես ճանապարհին նրանք հանդիպում են կոզոդունցիներին, որոնք իրենց հերթին փախչում էին նրանց մոտ: Եվ այդտեղ երկու ավանները գլխի են ընկնում, որ փախչելու տեղ, իսկապես ասած, չունեն, իսկ տեղները միմյանց հետ փոխելն էլ միտք չունի: Ելք չկար, և կասրիլովցիները վերադառնում են իրենց Կասրիլովկան, կոզոդունցիները՝ իրենց Կոզոդունկա:

Ահա մի այլ իրադրություն. Կասրիլովկան այրվել է: Ոչ մի տեղից օգնություն չկա: Ավանը պատվիրակներ է ուղարկում Եգուպեց, «յուրայինների»՝ հրեա հարուստների մոտ («Կասրիլովկայի այրվածները»): Եգուպեցի փողոցներից մեկում տարօրինակ ճամփորդներին նկատում է ոստիկանապետը: Իրենց թիկունքում զգալով կարգ ու կանոնի պաշտպանի մոտենալը, կասրիլովյան պատվիրակները, որոնք արդեն հասցրել էին մոտենալ հարուստի տանը, սկսում են հուսահատորեն դռան զանգը խփել: Նրանց զանգահարության վրա դռնից դուրս է թռչում «սպիտակ ձեռնոցներով» կարմիր երեսով, կերած-խմած կերպարանքով մի անձնավորություն և փակում նրանց ճանապարհը:

«Մեր կասրիլովցիները իզուր էին սպիտակ ձեռնոցավորին խնդրում, աղաչում, որ ներս թողնի իրենց, թեկուզ հաշտը, թեկուզ խոհանոցը: Իզուր էին գլուխները բարձրացնում դեպի վերնահարկի պատուհանները, որ միգուցե աստված մի հրաշք կատարեր (սա, եթե ցանկանա, ամեն ինչ կարող է) ու ինքը՝ հարուստը կամ էլ նրա տնեցիներից որևէ մեկը համազգի մարդկանց տեսնելով վտանգի մեջ, կարգադրի, որպեսզի ձեռք չտան...»:

Ավանից եկած աղքատների մի խումբ՝ սեղմված նորին արքայական գերազանցության ծառաների արքցանի և մյուս կողմից նորին գերազանցություն հրեա հարուստի ծառաների միջև — դա, իսկապես, սիմվոլիկ տեսարան է:

Մենախոսության ձևից Շուլմ-Ալեյխեմը օգտվում է ոչ միայն իր պատմվածքներում, այլև իր խոշոր ստեղծագործություններում: Մենախեմ-Մենդլի և իր կնոջ՝ Շեյնե-Շեյնդլի նամակները, կաթնավաճառ Տեվյեի պատմությունները, Մոտլ տղայի պատմությունը, այդ ամենը գրված են առաջին դեմքով:

Մենախեմ-Մենդլի և Տեվյեի կերպարները ամբողջ կյանքում գտնվել են Շուլմ-Ալեյխեմի ուշադրության կենտրոնում: Հենց իրեն նա կատակով մերթ անվանել է Տեվյե, մերթ Մենախեմ-Մենդլ, օգտագործելով այդ կերպարները հասարակ անվան առումով և նույնիսկ այդ կերպարներին ստիպել է մեկ անգամ հանդիպել: («Կաթնավաճառ Տեվյե» — «Քիմեռ» գլխում): Այդ երկու կերպարները տարբեր կրկնակներով մենք տեսնում ենք Շուլմ-Ալեյխեմի և այլ ստեղծագործություններում: Այդ կերպարներից սկիզբ են առել նրա ստեղծագործության երկու հիմնական գծերը՝ ողբերգա-կոմիկական գիծը, սատիրայի էլեմենտներով, և քնարական-երգիծականը:

Մենախեմ-Մենդը՝ համանուն նամականիից, իր ավանում զբաղմունք չգտնելով և լսած լինելով որ մեծ քաղաքներում մարդիկ փայլուն գործեր են կատարում, ձգտում է այնտեղ՝ լի վարդագույն երազներով: Գլուխը կորցրած, նա նետվում է զանազան մեքենայությունների հորձանուտը. կալվածքներ է առնում ու ծախում, անտառներ, չնայած իր կյանքում ոչ կալվածք է տեսել և ոչ անտառ. գործ է ունենում միլիոնների հետ, մի գրոշ չունենալով գրպանում: Մենախեմ-Մենդը կրում է անհաջողություն անհաջողության ետևից, բայց այդ նրան բնավ չի շփոթեցնում: Յուրաքանչյուր անկումից հետո նա նորից է բարձրանում, ասես թե ոչինչ չէր պատահել, և նորից սկսում ամեն ինչ: Նա պտտվում է սուտ հաջողությունների և իրական տապալումների կախարդական օղակում՝ երևակայական կոմբինացիաների և նյութական խոր կարիքի մեջ:

Մենախեմ-Մենդը մարմնավորում է մանր բուրժուայի կապիտալիզմին հարմարվելու ջղաձգական ջանքերը, կապիտալիզմ, որը անխղճորեն նրան ճգնում է: Այդ կերպարը համաշխարհային հնչունության մի կերպար է, ողբերգական-երգիծական կերպարն այն մարդու, որ կանգնած է երկու աշխարհների սահմանագծում:

Կաթնավաճառ Տեվյեն, համանուն վիպակից, իրենից ներկայացնում է Մենախեմ-Մենդի ուղղակի հակապատկերը: Դա ժողովրդի ծոցից ելած առողջ մարդ է, որ սովոր է ճակատի քրտինքով իր հացը ուտել: Նոր հովերի երևան գալը հաճախ շփոթության մեջ է գցում Տեվյեին, բայց դրանք այլ հովեր են: Չէ՞ որ ոչ միայն հաղթական երթով ընթացող կապիտալիզմն է փոխում նրա կյանքի սովորական ընթացքը, այլև 1905 թվականի հեղափոխությունը, ինչպես նաև նրանից հետո վրա հասնող ռեակցիան:

Յուրաքանչյուր նորություն Տեվյեի տունն է թափանցում աղջիկների միջոցով: Ամենից առաջ կործանվում է նահապետական ընտանիքը: Այլևս ավանդական միջնորդը չէ, որ տնօրինում է նրա աղջիկների անձնական երջանկությունը: Նրանց ճակատագիրը տարբեր ձևով է դասավորվում: Յեյտը ամուսնանում է մի աղքատ դերձակի հետ, որը կարճ ժամանակից հետո մահանում է թոքախտից. Գողը սիրահարվում է մի հեղափոխականի և նրա հետ ուղևորվում հեռավոր աքսորավայր: Խավան անտեսելով հայրերի պատվիրանը, ամուսնանում է այլազգի երիտասարդի հետ. Շարինցան վերջ է տալիս իր կյանքին՝ ցնցված հարուստ այրիի երես առած տղայի ուխտադրությունից, որին նա սիրում էր: Տեվյեի կոտսեր դուստրը՝ Բեյլկան, որ մեծացել էր ռեակցիայի տարիներին, իր վարքով խիստ տարբերվում է քույրերից: Չրկված լինելով հասարակական որևէ գաղափարից, նա, որ մի հեզ աղջիկ էր, ցանկանալով ծերության տարիներում ապահովել հորը, ամուսնանում է չսիրած մարդու, մի հարուստի հետ:

Փորձանքները իրար ետևից իջնում են Տեվյեի գլխին: Կյանքը անողորմ է վարվում նրա աղջիկների հետ, որոնք բոլորն էլ մեծից փոքր գեղեցիկ էին ու խելացի: Կինը մահանում է վշտից: Եվ ի լրումն այդ բոլոր դժբախտությունների, ցարի հրամանով, որով հրեաներին արգելվում էր ապրել գյուղական վայրերում, Տեվյեին՝ այդ ազնիվ աշխատավորին, արտաքսում են հարազատ վայրից, ուր ապրել էին նրա պապերն ու նախապապերը: Այդ արտաքսմանը Շուլում-Ալեյխեմը նվիրել է վիպակի ամենահուզիչ էջերը:

Տեվյեն ամբողջական կերպար է: Նա միշտ վարվում է իր խառնվածքին համապատասխան և երբեք չի մեղանչում խղճի դեմ: Նա ոչ միայն հասկանում է մարդկանց, այլև նրբորեն զգում գեղեցկությունը: Տեվյեի վիպակը ներծծված է ուկրաինական բնության բանաստեղծությամբ: Հարազատ երկրի և՛ արշալույսները, և՛ մայրամուտները, և՛ գարունները, և՛ ձմեռները, և՛ անտառները, և՛ դաշտերը տրված են Տեվյեի ընկալմամբ, նրա աչքերով:

Զախողակ Մենախեմ-Մենդը հաճախ է հարուցում խղճահարություն՝ իր միամտությամբ, դյուրահավատությամբ և ի վերջո ընթերցողը պարզապես ափսոսում է իզուր ծախսված մարդկային այդ էներգիան: Բայց ոչ ցավակցելը, ոչ խղճալը Մենախեմ-Մենդին չեն փրկում

ծիծաղելի դառնալուց: Ծիծաղելի է նրա հապշտապ, շփոթ խոսքը, ծիծաղելի է մարդկանց և իրադարձությունների գնահատության մեջ նրա խճճվելը, ծիծաղելի է նրա միևնույն տեղում դուրսելը, երբ լիովին հավատացած է, թե տարածություններ է հաղթահարում: Բազմաչարչար Տեվյեն, սրտաբաց ու ազնիվ Տեվյեն ոչ մի հանգամանքում չի դառնում ոչ խղճալի և ոչ էլ ծիծաղելի: Մեք չկռագնելով դժբախտության հանդեպ և կանգնելով նրան դեմառդեմ որպես ճյուղառատ կաղնի, որին ոչ մի փոթորիկ չի կարող գետնել: Նրա պես-պես լեզուն՝ առածներով, կատակներով, սուրբ ասացվածքներով, որոնք նա շրջում է և յուրօրինակ ու էպիկուրյան մեկնություններ տալիս, իմաստնության գանձարան է:

Իրեն և իր ձախորդությունները ծաղրելը բարձրացնում է Տեվյենին: Նրա հումորը արտահայտում է ժողովրդական օպտիմիզմ, ժողովրդի կենսունակությունը: Եվ ամենամոտիկ բարեկամը, որին կաթնավաճառ Տեվյեն վստահում է իր կյանքի պատմությունը, դա ինքը՝ հեղինակն է, որն այդտեղ հանդես է գալիս ունկնդրի դերում:

Շոլում-Ալեյխեմը դեռևս երիտասարդ գրող էր, երբ իրար ետևից հրատարակեց երկու վեպ՝ «Ստեմպեյուկ» (1888), որ նվիրված էր մի երաժշտի և «Իոսել Է սոխակը», (1890), նվիրված մի երիտասարդ կանտորի: Հրեական զանգվածները այդ ժամանակներում գիտեին միայն երաժշտի մի տիպ, դա հարսանիքների երաժիշտն էր, և երգչի մի տիպ՝ կանտորը, այսինքն՝ ըստ էության, սինագոգում շարականասաց:

Շոլում-Ալեյխեմի վաղ ժամանակում գրած վեպերը, չնայած որոշ նայիվությանը, գրավում են հանդեպ ժողովրդական տաղանդներն ունեցած իրենց սիրով, հանդեպ հեղինակի խոսքով ասած, այդ «մարգարիտները», որոնք ցրված են հրեական գետտոյում: Եվ այստեղ ոչ միայն բնածին տաղանդներին է ցույց տալիս, այլև արվեստի ազնվացնող դերը: Այն քաղքենիները, որոնք երաժիշտներին համարում էին ցածր արարածներ և երբեք սիրտ չէին անի նրանց ընդունել իրենց շրջապատի մեջ, մոռանում են ամեն մի առօրյա հոգս, երբ լսում են Ստեմպեյուկի նվագը: Նրա տաղանդը հմայում է, գրավում մարդկանց բարձր զգացմունքների աշխարհը: Հենց նույն մեշյանական-առևտրական միջավայրը, սակայն, խեղդում է տաղանդը: Եվ ոչ միայն տաղանդը, այլև մարդու մեջ եղած ամեն բան, ինչ վեհ է: Գեղեցկուհի Ռոխելեն, որին հալումաշ է անում անգործությունն ու անբովանդակ կյանքը, մեռցնում է իր սրտում բռնկվող սերը հանդեպ Ստեմպեյուկին և ինքն էլ ընկղմվում քաղքենիական ճահիճը: Իսկ Ստեմպեյուկն իր միակ մխիթարությունը գտնում է ջութակի մեջ:

Վեպի վերջում այդ բնածին երաժիշտը կանգնում է մեր առջև մռայլ և միայնակ, առևտրական կնոջ ամուսնու խղճալի դերում, կին, որը կապիտալի է վերածում նրա ջութակի աղեղի յուրաքանչյուր շարժումը:

Ձմռան սառնամանիքին լայն ճակատ ունեցող, թեքված տան պատի տակ, նստարանին նստած է մի շեկ տղա: Նա չի համարձակվում գնալ տուն: Ա՛յ, եթե հիմա դարպասին մոտենար մի մեծ սայլ, որից բրամաձկան հոտ է գալիս և ծածկված է խսիրով կամ թե կառապանը բերեր ուրախ-զվարթ արհեստավորների, տղան ցույց կտար նրանց սրահներ ունեցող մեծ բակը ուր կտանեին ձիերն ու սայլերը, և կգոռար ամբողջ ձայնով. «Էստեղ եկեք քեռի՛, Էստեղ եկե՛ք»:

Ապա նա եկվորներին կտաներ անհյուրընկալ տունը, որ բաժանված էր մի քանի խցերի և ուր գիշերողների համար կային թախտեր, այն ժամանակ ինքն էլ կկարողանար տաքանալ խոհանոցում, վառարանի մոտ: Բայց ավա՛ր: Ձմռանը շոգենավեր չեն գնում Դնեպրով, և Պերեյասլավ քաղաքը եկվորներ չկան: Եվ եթե գալիս է արջենու մուշտակով որևէ հարուստ վաճառական՝ իր մեծ, դեղին ճամպուրկներով, ապա նա կանգ է առնում ոչ թե Նոխում Ռաբինովիչի (տղայի հոր) իջևանատանը, այլ Յուլիմ Յասնոգորսկու հարուստ հյուրանոցում:

Դռան նստարանին նստած տղան Շոլոմ-Ռաբինովիչն էր, ապագա գրող Շոլոմ-Ալեյխեմը:

Շոլոմը վառ երևակայություն ունի, որը նրան այդ տիպի և տխուր տնից տանում է հեռու, և նա մոռանում է ցուրտը: Ձեռքերը խոր տանելով մաշված կիսամուշտակի թևքերի մեջ, նա երագում է գանձի մասին, որը որպես թե թաղված է Վորոնկովո ավանում, ուր Շոլոմը անց էր կացրել իր մանկության վաղ տարիները: Նա ծնվել է 1859 թվականին մարտի 2-ին Պերեյասլավ քաղաքում (այժմյան Պերեյասլավ-Խմելնիցկի), ուր Ռաբինովիչների ընտանիքը ետ վերադարձավ Վորոնկովայում կրած տնտեսական քայքայման պատճառով:

Ցուրտն ու քաղցը իրենցն անում են: Շոլոմը ներս է մտնում տուն: Բայց այդտեղ նրա վրա է հարձակվում խորթ մայրը իր «հարուստ, խայտաբղետ» անեծքներով:

Այդպես ապրեց տասներեք տարեկան հասակում մորից զրկված Շոլոմը, մեծ, քայքայված ընտանիքում:

Շոլոմի հայրը, չնայած իր նահապետական դաստիարակությանը, աչքի էր ընկնում հստակ մտքով և ձգտում էր այն ամենին, ինչ նոր էր: Նրա տանը հավաքվում էին քաղաքի առաջադեմ մարդիկ, նրանց թվում և պոդվորկովցի Արևույդը, որը գրողի կողմից մեծ սիրով նկարագրված է նրա ինքնակենսագրական «Տոնավաճառից» վիպակում, և շնորհիվ Շոլոմ-Ալեյխեմի հոր վրա ունեցած բարերար ազդեցության, վերջինս թույլատրում է Շոլոմին ընդունվելու Պերեյասլավի գավառային ուսումնարանը:

Գերազանց վերջացնելով ուսումնարանը, Շոլոմը երագում է Ժիտոմիրի ուսուցչական ինստիտուտը մտնելու մասին, միակ ուսումնական հաստատությունը, որ այն ժամանակներում մատչելի էր չքավոր ընտանիքից դուրս եկած տղայի համար: Բայց այստեղ էլ նրան չհաջողվեց ընկնել:

Շոլոմի համար վրա են հասնում շատ դժվարին ժամանակներ: Նա իր մեջ զգում է արտասովոր հոգեկան էներգիա, բայց դեռ չգիտե, թե ուր ներդնել այդ էներգիան: Նա թափառում է փողրիկ քաղաքներով ու ավաններով, տալիս մասնավոր դասեր՝ կրելով անհամար տառապանքներ: Զիչ չէ նրան վիճակվում քնել հատակին, քիչ չէ ուտելիս բռնում տանտիրուհու հայացքը, որը փակում է նրա ախորժակը: Պատահել է նաև, որ գիշերները օրորել է տիրոջ փողրիկ երեխաներին:

Շոլոմը տնային ուսուցիչ է կալվածատիրական հողերի կապալառու, մեծահարուստ Էլիմելեի Լուկի տանը, ուր նա հանդիպում է իր ապագա կնոջը՝ Օլգա Լուկային: Բախտը կարծես թե ժպտում էր նրան: Այդ տանը բոլորը լավ վերաբերմունք են ցույց տալիս ընդունակ պատանուն: Նրա տրամադրության տակ է բավականին հարուստ գրադարանը: Նա լրացնում է իր գիտելիքները, հմայված կարդում է ռուս և եվրոպական կլասիկներին. այդ ժամանակներին են վերաբերում նրա գրական առաջին փորձերը: Շոլոմը ազատ ժամեր շատ ունի, և նա զբոսնում է դաշտերում ու անտառներում: Նա առաջին անգամն է, ինչպես հարկն է, տեսնում բնությունը, ճանաչում նրա հրաշալիքները: Այդ տպավորությունները հետագայում դարձան ուկրաինական բնության հոյակապ պատկերներ, որոնց մենք հանդիպում ենք Շոլոմ-Ալեյխեմի ստեղծագործություններում:

Զմռան մի պայծառ ու ջինջ առավոտ Շոլոմը անսպասելի հարված ստացավ: Երբ առավոտյան դուրս եկավ իր սենյակից, տանը գտավ միայն ծառաներին: Տանտերերը անսպասելիորեն մեկնել էին ամբողջ ընտանիքով: Սեղանի վրա ընկած էր մի ծրար, որի մեջ դրված էր Շոլոմի աշխատավարձը: Ոչ երկտող, ոչ որևէ բացատրություն: Բակում ուսուցչի համար պատրաստ կանգնած էր սահնակը, և սրտում ցավ ու այրող վիրավորանք, նա ստիպված է լինում հեռանալ: Հետագայում պարզվում է, որ մեծահարուստ Լուկը, չնայած Շոլոմի նկատմամբ ունեցած իր բարյացակամությանը, սարսափելի կատաղել է, երբ իմացել է, որ այդ աղքատ ուսուցիչը համարձակվել է սիրել իր աղջկան:

Մի քանի տարի շարունակ Շոլոմը հուսահատությամբ լի նամակներ էր գրում իր սիրելուն, բայց Լուկը կաշառել էր փոստի պետին և նա այդ բոլոր նամակները տալիս էր Լուկի ձեռքը:

Վտարվելով Լուսների տնից, Շոլումը ուղևորվում է Կիև, աշխատանք փնտրելու: Բայց ապարդյուն: Ստիպված նա դառնում է պետական ռաբբի՝ Պոլտավայի նահանգում, Լուբնայում, ուր նա անց է կացնում ավելի քան երկու տարի, գարշանք զգալով իր վրա վերցրած այդ դերից:

1883 թվականին Շոլում Ռաբինովիչը և Օլգա Լուսան Լորից են հանդիպում և, հակառակ Օլգայի հոր կամքի, ամուսնանում: Հենց այդ տարում էլ հրեերեն տպագրվում են Շոլում Ռաբինովիչի «Երկու քար», «Ընտրությունները» և «Գրավված նամակներ» առաջին պատմվածքները:

1888 թվականին Շոլում-Ալեյխեմը իր միջոցներով սկսում է հրատարակել «Հրեական ժողովրդական գրադարան» գրական ամսանախները: Այդ հրատարակչության շուրջն են համախմբվում ժամանակի հրեա գրականության առաջավոր ուժերը:

Նա սահմանում է չտեսնված բարձր հոնորարներ, բացի այդ, նյութական օգնություն է ցույց տալիս տնտեսական նեղ վիճակում գտնվող ծերացած գրողներին: Հոգ տանելով հասարակ ժողովրդի լուսավորության համար, նա իր հրատարակչության շուրջն է համախմբում գիտության զանազան բնագավառների ներկայացուցիչներին: Այդտեղ էլ նա տպագրում է իր վեպերը՝ «Ստեմպեկյու», «Իոսելե սոխակը» և այլն:

Շոլում-Ալեյխեմը համաշխարհային նշանակություն ունեցող գրող է: Նա կանգնած է անցյալի գրողների առաջին շարքերում, գրողներ, որոնք իրենց ստեղծագործությամբ ճանապարհ հարթեցին ապագան կերտողների համար:

Ռ. ՌՈՒԲԻՆԱ